

իր գոյքերուն մեծ մասը դրկած էր Արատ-
ւիլ. եւ այն օր, մնացած երկու բնու գոյքերն
ուղարկած էր Եղեւարդ գիւղը, պատուիրե-
լով որ հոն, գետափին, իրեն սպասեն: Կէս-
օրին, ինք եւս ջորի կը հեծնէ ու ճամբայ
կ'ելլէ, ընդ առաջ դրկելով Վարդան անուն
սուրհանդակ մը: Զաքարիա այսպէս կը
պատմէ Կաթողիկոսին ճամբորդութիւնը.
«Ի վերայ Նորագեղոյ գնաց առապար ճա-
նապարհաւ, եւ մերձ ի մտանել արեւգահանն՝
եհաս յեղեւարդ. եւ առեալ անտի երկու
արս քաջասիրտս եւ աներկիւզս թուանքով,
եւ ընդ նոսա գնացեալ ի գաւառն Նիգ, ի
գիւղն Զորոյբերան, որ այժմ ասի Գուլա-
տի, եւ անտի եւս առեալ բարեպաշտ այր մի՝
Եաւրի անուն, եւ անցեալ ի Տաշիր, եւ գնաց
ի Լոռի ի գիւղն Գսեղ: Եւ անտի եւս առեալ
արս երիս, եւ եղեն բազումք. եւ անցեալ
գնացին ի կողմն Աղուանից ի Բարկուշատ
եւ մինչեւ ի սահմանս Պարսից, եւ հասին
յԱրտաւիլ. եւ էառ զճամբարն իւր՝ զոր ա-
ռաքեալ էր առաջագոյն, եւ ելեալ անտի՝ եւ
գնաց եհաս յԱսպահան» (8):

Կաթողիկոսին պահակը, Ապաղ, իմա-
նալով կալանաւորին փախուստը, կ'երթայ
Կոտայք գաւառը, Ղոխ-Պուլաղ կոչուած
աղբիւրները, ուր օղափոխութեան դացած
էր Երեւանի Սանը, եւ անոր կը պատմէ՝ թէ
ինչպէս Կաթողիկոսը փախաւ: Սանը բար-
կանալով Ապաղին դէմ, իրմէ 30 թուման
տուգանք կ'առնէ: Եւ իր հարձերը հոն թող-

(8) Անդ: